

ՇՎԵՅՅԱՐԱԿԱՆ ԳԻՒՂ ^{*)}

VI

Ցիշում ես, սիրելիս, իմ նամակներից մէկում ակնարկելով մեր երկրի գիւղական կեանքի տիտոր երևոյթներից մէկի՝ զիանի մասին, խոստացայ քեզ գրել թէ ինչպէս է հասկանում շվեյցարական գիւղացին սեփականութեան գաղափարը, ինչով և ինչպէս է արտայայտուում նրա յարդանքը գէպի ուրիշի քրափնքի արդիւնքը։ Սյօօր կատարում եմ խոստումա, և դրան առիթ տուող գէպքը այն ասուիձան ուշագրաւ է, որ ես կ'սկսեմ հէնց այդ գէպքից։

Տունը՝ ուր ես ապրում եմ, դանուում է գիւղի եզրին. իմ լուսամուտի տակից անցնուում է այն մեծ խճուղին, որ մի կողմից անցնելով գաշտերից դնում է գէպի Մօն-Պելրէն և Բերնի կանտօնը և միւս կողմից միանում է այն ճանապարհին, որ տանում է գէպի Լօգան։ Պարագ ժամերին ես սիրում եմ իմ լուսամուտից նայել լայնարձակ ու կանաչաղարդ գաշտերի և լեռնալանջերի մէջ գալարուող սպիտակ ճանապարհին, որ այնպէս պարզ ու սիրուն զծագրուում է համատարած կանաչաւուն փօնի վրայ։ Ճանապարհն ինքն ըստ ինքեան միշտ հետաքրքիր է, այն դիտելիս մարդ մի փոքր փիլիսոփիայ է գառնում։ Եւ դա համարական է, սիրելիս, մեծ ճանապարհի վրայ կատարուող անցուղարձը երբեմն յարուցանում է այնքան խոհեր, նայում ես երկար, երկար, և քեզ թւում է, թէ առաջդ կեանքի մեծ ուղին է, որով անցնում են այնքան մարդիկ՝ իւրաքանչիւրը շալակած իր ճակատագիրը։ Ինձ համար, իբրև արեելցու, ճանապարհը կրկնակի խորհրդաւորութիւն է ներկայացնում. գու յիշում ես անշուշտ մեր հէքիսաթները, որ լսել ինք ձմեռ ժամանակ սաքուներում, բուխարու կրակի առաջ. յիշում ես, թէ արեելքի երեակայութիւնը ինչեր է կապել հեռաւոր, մեծ ճանապարհնե-

^{*)} Տես «Մուլճ» № 12, 1902 թ.։

րին՝ որոնք դէպի անյայտն են տարել և միացել ճակատագրի գաղափարին։ Այնքան խորիմաստ անցքեր, նշանակալից դիպուածներ, անակընկալ արկածներ, բարձր առաքինութիւններ ու մե ոճիրներ, որոնք անցել են արեւելքի մեծ ճանապարհների վրայ։ Զը կայ մի հէքիաթ, որի հերոսը դէպի հեռաւոր, անյայտ աշխարհները ճամբորդած չը լինի։ Մեծ ճանապարհը դեռ այսօր էլ արևելքում այն խորհրդաւոր հովիտն է, ուր կեանքը պարզում է իր միատերը, իր փիլիսոփայութիւնը։

Այժմ, երբ ես դիտում եմ այս մեծ ճանապարհը, զգում եմ, թէ որքան արեւելցի եմ ինքս, այնքան բան եմ բերել ինձ հետ մեր հին հէքիաթներից։ Ամեն բան ինչ կատարւում է այս ճանապարհին, իմ աշքում մի առանձին խորհուրդ ունի. չէ որ մենք արեւելցիներս տրամադրուած ենք դէպի միստիցիզմ։ Առաւոտները այստեղով աշխատաւորները դաշտ են գնում դեռ արեւը չը ծագած, երբ ես անկողնում եմ լինում, աւելի ուշ մասուկները հեռաւոր խրճիթներից գալիս են դպրոց, լուսամուտի տակից անցնում են քաղցրիկ շատախօսութեամբ։ Երեկոյեան դաշտերից գալիս են խոսով բարձած սայլեր ու աայլակներ և գաշտերի դիւրալի բուրմունքը տարածում են գիւղի փողոցներում, աղջիկները խմբով անցնում են երգելով իրանց ժողովրդական երգերը, որոնք ի դէպ է ասել ինձ բնաւ դաւր չեն գալիս, որովհետեւ նրանցում տիրութեան, ցաւի նշոյլ չը կայ. իսկ արևելցին կարծես առանց սեի ու վշտի գեղարուեստ հասկանալ չէ կարող։ Պատահում են նաև բնորոշ զգեստով տուրիստներ, անգլիացի կամ գերմանացի օրիորդներ ու կանաք, որոնք խընդերուակ գնում են վերելք կատարելու դէպի շլէցարական լինեների ամպամած կատարներ։

Եւ ես դիտում եմ այդ բոլորը, դիտում և մտածում մեր հէքիաթների մեծ ճանապարհների և անծայլ արկածների մասին։ Այս բոլորն անշուշտ հետաքրքիր է, բայց այսօր ճանապարհի վրայ մի դէպի տեղի ունեցաւ, որ հետաքրքիր լինելուց զատ, նաև խիստ բնորոշ է այս երկրի բարքերի ու բարդական հասկացողութիւնների տեսակէտից։

Ես իմ լուսամուտից տեսայ, թէ ինչպէս մի գիւղացի ճանապարհով քում էր մի եղ, կամ աւելի ճիշտ՝ քաշում էր՝ մի հաստ չուան պարանոցից կապած։ Հնազանդ եղը հետեւում տիրոջը առանց գլուխն այս կամ այն կողմը դարձնելու։ Գիւղացին հասաւ ճանապարհի վրայ շինուած մի տան և կանգ առաւ մտածողութեան մէջ։ Նա նայեց այս ու այն կողմը, երեւում էր մի տեղ է փնտրում եղը կապելու համար դրսում։ Նրա մտահոգութիւնն ինձ անհասկանալի էր, որովհետեւ հէնց իր աշ-

քի առաջ ճանապարհի եղբին ծառեր կային, որոնցից շատ հեշտ էր կապել եղբ, ուր մնաց, որ կարելի էր կենդանին ազատ թողնել՝ առաջի խրուերն արածելու, մինչև որ տէրը կը գար. բայց տէրը երեխ ուրիշ կերպ էր մտածում, նա յետ գնաց դէպի այն կամուրջը՝ որով անցել էր քիչ առաջ. եղբ քաշեց առուի ջրի մէջ և պարանը պնդացրեց կամուրջի փայտերին ու յետ եկաւ, ներս մտաւ առաջի տունը: Քիչ յետոյ նա դուրս եկաւ, արձակեց իր եղբ, պարանը ձեռք առաւ և շարունակեց ճանապարհը: Ես ցած իջայ և նրան ընկերացայ:

—Բարեւ պարո՞ն...

—Բարեւ պարո՞ն:

—Թոյլ կը առաջիք արդեօք մի փոքր տեղ ձեղ ընկերանալ:

—Հաճութեամբ, եղաւ պատասխանը: Մենք քայլեցինք մի-ասին դէպի զիւղից դուրս:

—Ես ձեղ մի քանի հարցեր ունեմ տալու և յոյս ունեմ չէք զանայ ինձ պատասխանել:

—Խնդրեմ, ես պատրաստ եմ կատարել ձեր ցանկութիւնը, անշուշտ օտարական էք:

—Այս, օտարական եմ, ես ձեղ տեսայ հեռուից և նախ կ'ուզէի իմանալ, թէ ինչու ճանար այս կենդանուն չէք թողնում ազատ զնալ ճանապարհով և կաշկանդել էր պարանով, ինձթուում թէ նա խաղաղէ և ընաւ փախչելու նպատակ չ'ունի: Գիւղացին ժպտաց.

—Այդ այդպէս է, սիրելիս, բայց մեր երկրում, օրէնքով յունիս, յուլիս օգոստոս ամիսներում անասուններին ազատ չէ կարելի թողնել, որպէս զի չը արորեն հարեանի խոտերը. ընդհանուր խոտանձից յետոյ միայն մեր գոմերից հանում ենք անասուններին և արձակ թողնում դաշտերում, իսկ մինչի այդ՝ նրանք բոլորն էլ փակուած են գոմերում և կերակրուում են հնձած խոտով: Եղբ՝ որ աեսուում էք, ես զնեցի այսօր հարեան զիւղից, նա փախչող չէ, բայց էլի անասունէ, կարող է ճանապարհի եղբից զնալիս այս ու այն կողմից կանաչին վեաս տալ, իսկ կանաչը իմը չէ, ուրիշին է, որ աշխատել է, հասցրել, որ հաւաքի իր անասունների համար: Դէ, որ ամեն մի մարդ, որ եղ է քշում մեծ ճանապարհով թոյլ տայ, որ իր անասունները մի փոքր արորեն մօտի արտերը և խոտանեղերը վեասն ահազին կը լինի, և շատերը կը թշուառանան, ահա թէ ինչու ես իմ եղբ քաշում եմ պարանը կատած պարանոցից. այսպէս լաւ է, թէ իմ խիզճը հանգիստ է և թէ այս արտերի տէրերը կարող են հանդիսան լինել:

—Այժմ մի ուրիշ հարց, ասացեք ինդրեմ, ինչու քիչ ա-

ուաջ ձեր եզը քշեցիք առուի մէջ մտցրիք և կապեցիք կամրջից:
—Պատասխանս համարեա նոյն է, ես չը գիտէի ուր թող-
նել կենդանուն, եթք ես ստիպուած էի մի առ ժամանակ հե-
ռանալ նրանից, ճանապարհի ծառին կապել չէի կարող, որով-
հետև կ'ուտէր ծառի տակի կանաչը. աղաս ձգել նոյնալէս
անհարբն էր, չորս կողմա ուրիշի չը հնձած խոտատեղեր էին,
Միակ ելքն այն էր, ինչ որ արեցի:

Դուք գուցէ զարմանում էք, շարունակեց շվեյցարացին, որ
մենք այս աստիճան ծայրայեղ հոգատարութիւն ունինք գէպի
մեր խոտատեղերն ու արօտատեղերը, բայց պիտի գիտենաք,
որ մենք նրանցից բացի ուրիշ ոչինչ չունինք, մեր աղքատ
բնութիւնը միայն խոտ է տալիս մեզ, և խոտը մեզ համար ա-
մեն ինչ է. նա և մեր ցորենն է, և մեր գարին, և մեր այգին,
նրանով ենք պահում մեր անսառնները, հետևապէս նա է մեր
զիսաւոր արդիւնաբերութեան, այսինքն կաթնեղէնի աղբեւրը:

Ես լսում էի ծայրայեղ ուշադրութիւնամբ, ինձ համար այս
փոքրիկ խօսակցութիւնը, այս փոքրիկ դիպուածը շատ բան էր
պարզում:

—Մեր երկիրը, ինչպէս տեսնում էք, աղքատ է, շարունա-
կեց խօսակիցս, ինչպէս է ձերը:

—Ո՛, մերը շատ հարուստ է, բնութիւնը մեզ տալիս է
ամեն ինչ և այն քիչ աշխատանքով, առք, հարաւային երկիր է:

—Բաղդաւորներ, ասաց նա, ես նայեցի երեսին և չը կա-
րողացայ ժպիտ ծածկել: Ինքն էլ չը գիտէր, այս միամիտ շը-
վեյցարացին, թէ ինչ կծու հեգնութիւն կայ այս մի հատիկ բա-
ռի մէջ, բաղդաւորներ...

Գիւղից շատ էինք հեռացել, ես սեղմեցի խօսակցիս ձեռ-
քը և յետ դարձայ գէպի գիւղ նոյն ճանապարհով:

Ես քայլում էի ճանդարտութեամբ, դիտելով կանաչազպարդ
շրջակայքը, ճանապարհը և նրա երկու կողմին շարուած պլա-
զատու ծառերը: Ես տեսնում էի, թէ ինչպէս անմիջապէս ճա-
նապարհի եղբն երկու կողմից բարձրանում է խոտը պատի
պէս, որովհետև ոչ մի կենդանու ոտք չէ գիտել: Յիշում ես
սիրելիս, մեր արտերի մարզերը, մանաւանդ այն արտերի, ո-
րոնք մեծ ճանապարհների եղբերին են գտնուում. մարդ ասելով
մեզանում հասկանում են իւրաքանչիւր արտից մի բաւական
մեծ տարածութիւն, որ թոյլատրուած է արորել, ուտացնել, ա-
ւերել. երանի թէ միայն մարզով բաւականանան. յաճախ նրա
անունով հասնում են կենարունին: Ո՞վ է մտածում, թէ որքան
աշխատանք, որքան քրքանիք է արորուուր յանցաւոր ուների տակ:

Անցնում եմ այս ճանապարհով, դիտելով նաև պտուղներով

ծանրաբեռնուած ծառերը հեռաւոր դաշտերում։ Այս ծառերը տնկուած են իւրաքանչիւր արտի կամ խոտածեղի մօտ և ի հարկ է պատկանում են հողատիրոջը։ Ինչ առել կ'ուզէ, որ նրանց վրա հսկող պահապան չը կայ, պատուղները մեծանում, համանում են, ծանրաբեռնուած ճիւղերը կախուում են ճանապարհի վրայ, օրօրուում են անցորդների գլխին կամ քաւում են նրանց ուսին, ասես ուշագրութիւն դրաւելու համար, բայց և այսպէս ոչ ոք, ոչ ոք ձեռք չի բարձրացնուում քաղելու թէկուզ մի հատ պառուղ, կարելու մի փոքրիկ ոստ, որովհետեւ դրանք ուրիշի սեփականութիւն են, ուրիշի քրտինքի արդիւնք, որ խորին յարգանքի առարկայ է։

Ճանապարհին ես տեսնում եմ սալորի, կեռասի, խնձորի բազմաթիւ ծառեր, նրանցից շատերի տակ թափթփած են հասած պատուղները, անցորդները տեսնում են, բայց ոչ ոք չի կը ուանում մի հատ վերցնելու, մինչեւ տէրը կը գայ և կը հաւաքի,

Եւ ինչ որ ուշագրաւ է, այսուղի դաշտերի պահապաններ չը կան, դրսում, ինչպէս և գիւղերում, ամեն ինչ թողուած է հասարակաց խնամքին։ Զիանը և գողութիւնը վաղուց անցել են հերիաթների կարգը։ Սրեաշատ տեղերում պատահում են խաղողի այգիներ, որոնցից և ոչ մէկը ցանկապատ չ'ունի։ Պտուզը համանում է, կախուում ճանապարհի վրայ, գեղին ողկոյզները ախորժելի տեսքով գրաւում են անցորդների հայեացքը և սակայն ոչ ոք չի մօտենում, ոչ մի ձեռք չի մեկնուում, չը նայելով որ հոկող աչք չը կայ։ Եւ աւելի հետաքրքիրն այն է, որ հասակաւորներից ոչ պակաս ուշագրիր են գէպի ուրիշի սեփականութիւնը նաև փոքրիկ երեխանները։ Այսպէս իմ լուսամուտից երեւում է հարեւանի բակը, որ ոչ այլ ինչ է, եթէ ոչ պալատու ծառերի մի պարտէզ փոռուած տան առաջ։ Բակ ասելով մեր երկրում հասկանում ենք սովորաբար մի փոքրիկ տարածութիւն։ աղբի մէջ կորած և երեք-չորս արշին բարձր պատով շրջապատուած։ Շատ անգամ այդքանով էլ չը բաւականացած, մեզանում պատերի վրայ շարում են ապակու կտորուանք, փուշ, որ բարձրանախ անհնարին լինի։ Այսուղի բակն ինչպէս ասացի մի ծառազարդ պարտէզ է, չորս կողմից բաց, առանց պատերի, առանց պատուարի կամ խրամագի։ Այսպէս է նաև մեր հարեւանի բակը, խնձորենիները պատուղներով ծանրաբեռնուած՝ կախկախուել են հէնց ճանապարհի վրայ, որ անցնում է այդ տան առաջից։ Օրական երկու անգամ ես տեսնում եմ զպրոց յաճախող հինգից տան տարեկան երեխանների խմբեր, որոնք կամչուտելով անցնում են այդ ծառերի տակից, և ինչ, մինչեւ անգամ վերև չեն նալում։ Այդ փոքրիկներից և ոչ մէկը մի հատիկ քար

չի ձգում դէպի ծառերը: Սա ինձ ուղղակի անլշեցնում է: Երանք վազվում են ճանապարհով, քաշքչում են իրար և ոչ մէկը չի նետում դէպի արձակ դաշտը, որպէսզի չը արորեն խոտերը: Բաւական է, որ նրանցից մէկն ու մէկը մի քեզ գուրս գայ ճանապարհոց և ահա մի քանիսը մի անդամից կանչում են, «c'est défendu», այդ արգելուած է:

Շվեյցարական դաշտերով անցնելիս մարդ երբեմն տեսնում է այս ու այն տեղ անկուտած փայտեայ փոքրիկ սիւներ և վրան գրուած մեծ տառերով՝ «այս կածանը մասնաւոր է և ոչ ճասարակական» կամ թէ «աս մասնաւոր սեփականութիւն է և ներս մանեն արգելուած»: Է կամ «հաշտարար դատաւորն արգելէ այսաւեղ մտնելը»: Ես այս փոքրիկ յալտարարութիւնները միանգամայն բաւական են, որ անցորդները յարգեն սրա կամ նրա սեփականութիւնը:

Դու յիշում ես սիրելիս, մեր դպրոցի ճանապարհը: մենք գնում էինք հարեւան զիւղը առփորելու: բացի իսկական ճանապարհը, որ բաւական երկար էր, կար մի այլը, որ թէ շատ կարճ էր, բայց անցնում էր մի շարք արտերի միջից: Եւ ամենայն տարի աշնանից հասարակութեան և այդ արտերի տէրերի մէջ սկսում էր մի անմերջ պայքար: Հասարակութիւնն իր երթեւեկութեան համար ընտրում էր կարճ տարածութիւնը ըուլովին անփոյթ, թէ այդպիսով տրորում է իր հարեւանի արտերը, ոչնչացնում է նրա երեխաների ապրուստը: Արտերի տէրերը դիմում էին իրանց կարծիքով մի շատ բազիկալ միջոցի, իրանց բարիքը վրկիւլու համար: Նրանք երթեւեկութեան հաւանական տեղի առաջ փորում էին մի լայն, երկար ու խոր խրամատ, նոյն բանն էին անում արտի միւս ծայրում, որտեղից պէտք է դուրս գային անցորդները: Նրանք կրկնակի նպատակ ունէին, նախ արգելել անցուդարձը, իսկ ով ըմբռստ է, մրտածում էին նրանք, թող ընկնի, ոտը կոտրուի, որպէս պատիժ: Հասարակութիւնը սակայն այնքան էլ յիմար չէր, նա պտոյտ էր գործում արտի մէջ, աւելի լայն շրջաններով էր արորում, նոր անցք, նոր ճանապարհ հարթում: փորում էին նորանոր խրամատներ, բացւում էին դարձեալ նոր շափկներ, մրցութիւնն ըարտնակում էր մինչև մայսի, երբ վերջնական յաղթանակը մնում էր հասարակութեանը, որովհետեւ տէրերը դադարում էին բոլորքելուց, քանի որ էլ ոչինչ չէր օգնի: արորուած տեղում էլ ոչինչ չէր բոււնի: Ես ու գտ էլ ի հարկէ շատ ուրախ էինք հասարակութեան այդ յաղթանակով, որ խիստ կարծացնում էր մեր ճանապարհը: Ես լաւ յիշում եմ, մեր համարեա բոլոր գիւղերում նման երկոյթներ կան, վայ այն մարդուն,

որի արտը կտրուկ ճանապարհի յարմարութիւն է ներկայացնում, նա անպատճառ ոտի տակ կ'երթայ, նա անպատճառ ճանապարհ կը դառնայ:

Ես յիշում եմ նաև մեր գաւառի ո. Լուսաւորիչ ուխտածին, որ գտնուում է Ա... գիւղի հանգերի մէջ: Ուխտագնացութիւնը ամառն է կատարուում, երբ արտերն ու առայսները գեռ հնձուած չեն լինուում: Ա...Եցիք ուխտագնացութիւնից մի օր առաջ ստիպուած են լինուում ջրել եկեղեցուն մօտիկ գանուող տափերը, որպէսզի ուխտաւորները տրորել չը կարողանան, թէ չէ ոչինչ չի փրկի: Հարբած ու զուարձացող ամբոխը աւերած է սփոռում այն եկեղեցու շուրջը, ուր ազօթելու է եկել առանց մտածելու, որ այդպիսով իր ուխտագնացութիւնը մի կատարեալ յանցագործութիւն է: Զարմանալի է, ամենից աւելի տանջուած, ամենից աւելի տառապող ժողովաւրդը ացպէս սիրում է թշուառութիւն տարածել իր շուրջը: Սա մի ուշագրաւ երևոյթ է:

Հասարակութիւնն անհատի դէմ, այստեղ է մեր երկրի շատ չարիքների հանգոյցը: Որքը, անզօրը, այրին, խեղճը, մենակ մարդը, սրանք բոլորը մի մի գոհեր են այն հազար զիսանի հրէշին, որի անունն է հասարակութիւն: Ես հասկանում եմ թէ ինչու մեր երկրում, ուր իշխում է հասարակութեան համարեա գաղանային կամայականութիւնը, մարդիկ այնպէս ուզում են եղբայր, մերձաւոր, ազգուտակ, կամ ինչպէս իբանք են ասում «քեօմագ» ունենալ: Յիշում եմ, ինչպէս հայրս յաճախ կրկնում էր, թէ որ Աստուած էլ «անքօմագ», առանց ախպէր լինի, խրճախի է: Որքան դառն ճշմարտութիւն կայ այս խօսքերի մէջ: Հասարակութիւնն անհատի դէմ է ուր երկրում, հասարակութիւնն անհատի համար է Շվեյցարիայում: Սա մի ուշագրաւ հակադրութիւն է, մեզանում ուրախանում են անսելով որ մի մարդ առաջինը տրորեց և անցաւ մէկի արտի միջից, որովհետեւ միւսները հետեւում են նրան առանց վրդովելու, արտեղ, Շվեյցարիայում, եթէ ճարուէր էլ մի այնպիսի անողորմ մարդ, որ առանց խզահարուելու տրորէր, անցնէր մէկի արտով, այնուամենային դա ընդհանուր զայրոյթ կը յարուցանէր և ոչ ոք նրան չէր հետեւ: Հասարակական խիզճը մի արդար և զգաստ դատաւոր է այստեղ, որի վճիռներից ոչ ոք խուսափել չի կարող: Մեզանում նա քնած է:

Բարոյական գաղափարները սիրելիս, ինչպէս և սեփականութեան վերաբերեալ հասկացողութիւնները յարաբերական են տեղին և ժամանակին: Հատ բան որ մի ժամանակ համարուել է ընդհանուրի սեփականութիւն, այժմ մասնաւոր է, ինչ որ

մասնաւոր էր, դառնում է ընդհանուր: Ով զիտէ զուցէ և ոչ
շատ հեռաւոր ապագան սեփականութեան իրաւոնքի և առաջ-
սարակ նրան կապուած բարոյական հասկացողութիւնների շըր-
ջանում այնպիսի աւերած առաջ կը բերի, որ ներկայումս մենք
երեակայել անդամ ցնակ կարողանում: Ինչ որ պարզ է, ինչ որ
դուրս է ժամանակից և տարածութիւնից, դա մարդկային հո-
գուն յատուկ արդարութեան և արդարադատութեան զգացմուն-
քըն է, որին այս կամ այն հասարակութիւն ենթար-
կում է իր այս կամ այն բարոյական հասկացողութիւնը և նրա
վճռին ականջ դնում: Իր չէմքից հեռացող հիւրին կողոպտող
քիւրդը իր որոշ բարոյական օրէնքն ունի, որ համապատասխա-
նում է իր արդարադատութեան զգացմունքին: Նա չի էլ հաս-
կանայ, եթէ փորձես նրան բացատրել իր վարմունքի գէշութիւ-
նը: Այսուեղ սեղազրանքը տեղ չ'ունի, նրա զլուխը ամերողապէս
յեղաշրջել է պէտք է հետևակի համարու համար: Յունական մի
չին երգ ասում է «իմ հարստութիւնը՝ իմ տէզն է», իմ սուրը և
իմ սիրուն վահանը, որ մարմնիս պատսպարաննէ: Արանցով եմ
ես վարում, հնձում և քամում իմ խաղողի որթերի գինին: Սա
էլ կատարեալ քրդական հասկացողութիւն է եղել յատուկ և
բնորոշ հնագոյն ժամանակներին: Բայց նոյն յոյնը իր մտածող-
ների, փիլսոփաների, բանաստեղծների չորհիւ վերջ ի վերջոյ
մշակմց այն քաղաքացիական առաքինութիւնները, որոնց վրա մենք
նոյն խոկ այսօր սքանչանում ենք: Այսպէս միշտ պատմութեան
էկովիւցիայի ընթացքում բարոյական հասկացողութիւնները փո-
փոխուում են անընդհատ, անխախտ և կայուն է միայն արդա-
րադատութեան զգացմունքը, որը զարթեցնել, այսպէս ասած
յդկել, կոկել է հարկաւոր:

Իսկապէս մեծագործ մարդ կը լինի նա, | ով կարողանայ
մեր ժողովրդի հասարակական խիդճը կրթել, զարգացնել, ըզ-
դայուն դարձնել դէպի ըրջապատող չարիքը: Մի միայն հա-
սարակական ազնուացած խիդճը կարող է վերջ դնել տղէտ,
խաւար ժողովուրդների զլիխն ծանրացող չարիքին որի խոչը
հիմունքներից մէկն է անհատի և հասարակութեան շահերի
անհամաձայնութիւնը, այդ երկու ֆակտորների մշտական պայ-
քարը:

Լայս, լոյս մեր ժողովրդի հասարակական խոզի մութ խոր-
շերը լուսաւորելու:

Յդրութիւն!

Շնկերդ՝

ԿՈՒՐԲԱՅԹ-ՀԱՐՈՒՆ